

**ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԹԵԼՅԱԶԻՈՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՀՏԴ 619: 576. 89

DOI: 10.56246/18294480-2023.15-05

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼԵՐԻ

ՀԱԱՀ դասախոս,
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի ավագ գիտաշխատող
Էլփոստ՝ grigoryanvgv@mail.ru

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱԱՀ դասախոս,
անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի առաջատար գիտաշխատող
Էլփոստ՝ akobian.anush@gmail.com

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԷ

ՀԱԱՀ դասախոս,
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի գիտաշխատող
Էլփոստ՝ gayanemartinovna@gmail.com

ԵՐԻԲԵԿՅԱՆ ՄՊԱՐՏԱԿ

ՀՎԿԱԿ ռեֆերենս լաբորատորայի նմուշառման

բաժնի պատասխանատու

Էլփոստ՝ vivarium2016@mail.ru

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԻԱՆԱ

ՀԱԱՀ դասախոս,
անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Անասնաբուժական և անասնաբուժության սանիտարական
փորձաքննության հետազոտական կենտրոնի տնօրեն
Էլփոստ՝ lianagrigoryan7878@mail.ru

**Տավարաբուծությունը համարվում է գյուղատնտեսության
առաջատար ճյուղերից մեկը և մարդու սննդամթերքի գլխավոր
աղբյուրը /միս, կաթ/, վերամշակման, թեթև արդյունաբերության հումքի,
բույսերի սնուցման հիմնական մատակարարը:**

**Խոշոր եղջերավոր կենդանիների թեյազիոզը Հայաստանում
տարածված, սակայն քիչ ուսումնասիրված հիվանդություններից է:
Տավուշի և Լոռու մարզերի մի շարք մանր գյուղացիական
տնտեսություններում հետազոտվել են 567 տարբեր սեռահասակային
խմբերի պատկանող կենդանիներ տարվա բոլոր եղանակներին:
Հետազոտված կենդանիներից 108-ի մոտ /19,3%/ հայտնաբերվել են
թեյլազիայի հարուցիչներ, որոնք եղել են 2 տեսակ՝ *Thelazia rhodesi* և
Thelazia gulosa: Հիվանդության նկատմամբ առավել ընկալունակ են մինչև**

1 տարեկան մատղաշները, իսկ 3 տարեկանից բարձր հասակ ունեցող կենդանիները շատ քիչ են վարակվում: Որպես օրինաչափություն՝ վարակված կենդանիների մոտ ախտահարվում է հիմնականում 1 աչքը, միայն 18-ի մոտ /16,7%/ ախտահարվել են 2 աչքերը:

Հիվանդ կենդանիների քանակը հետզհետե ավելանում է և իր գագաթնակետին է հասնում մայիսի վերջերից մինչև սեպտեմբեր ամիսը: Մատղաշների մոտ էքստենսիվությունը հասնում է 58,4%-ի, իսկ հասակավորների մոտ՝ մինչև 13,1%: Այնուհետև սկսվում է հիվանդ կենդանիների քանակի նվազում. աշնանը հասնում է 5,3%-ի, իսկ ձմռանը՝ 0,2%: Գարնանը սկսվում է հիվանդ կենդանիների քանակի աճ՝ հասնելով մինչև 4.21%-ի, որը կապված է կենդանիներին արոտավայր տեղափոխելու և միջանկյալ տերերի՝ զոոֆիլ ճանճերի քանակի ավելացման հետ:

Բանալի բառեր՝ թեյագիոզ, կենդանիներ, Տավուշ, Լոռի, աչք, հարուցիչ:

Ներածություն

Տավարաբուծությունը համարվում է գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը և մարդու սննդամթերքի գլխավոր աղբյուրը /միս, կաթ/, վերամշակման, թեթև արդյունաբերության հումքի, բույսերի սնուցման հիմնական մատակարարը [8]: Ճյուղի զարգացմանը խոչընդոտող պատճառներից են համարվում ճիճվային հիվանդությունները, այդ թվում նաև թեյագիոզը: Խոշոր եղջերավոր կենդանիների թեյագիոզի տարածվածությունն ու նրա պատճառած վնասը անհրաժեշտություն են առաջացնում ուսումնասիրել հիվանդության հարուցիչներին և առաջացրած հիվանդությունը, մշակել կանխարգելման և բուժման առավել արդյունավետ միջոցառումները:

Գրական աղբյուրների վերլուծությունը ցույց է տալիս, որ տավարի թեյագիոզը տարածված է բազմաթիվ բնակլիմայական գոտիներում: Կարևոր հիմնախնդիրներից է համարվում գտնել արդյունավետ բուժման միջոց, ինչպես նաև պաշտպանել կենդանիներին միջանկյալ տերերի՝ ճանճերի հարձակումներից: Թեյագիոզները աչքի և քթաարցունքային խողովակների ճիճվային հիվանդություններ են, որոնք բնորոշվում են կոնյուկտիվիտով, կերատիտով, ուժեղ արցունքահոսությամբ, եղջերաթաղանթի պղտորությամբ և խոցակավմամբ, երբեմն տեսողության կորստով: Թեյագիոզով հիվանդանում են խոշոր եղջերավոր կենդանիները, երբեմն ձիերը, հազվադեպ խոզերն ու շները: Հարուցիչները յուրաքանչյուր կենդանատեսակի համար յուրահատուկ են, սակայն շների հարուցիչները կարող են մակաբուծել նաև մարդկանց մոտ:

Խոշոր եղջերավոր կենդանիների մոտ մակաբուծում են հարուցիչների 3 տեսակներ՝ *Thelazia rhodesi* (Desmarest, 1872), *Thelazia gulosa* (Railliet et Henry, 1919), *Thelazia skrjabini* (Erschow, 1928): *Th. rhodesi* տեսակը տեղակայվում է աչքի կոնյուկտիվային խոռոչում և երրորդ կոպի տակ, *Th. gulosa* և *Th. skrjabini* տեսակները՝ քթաարցունքային խողովակում և արցունքագեղձի ծորաններում: Չնայած թեյագիոզի լայն տարածվածությանը՝ շատ քիչ ստույգ տվյալներ են հայտնի հիվանդության աշխարհագրության վերաբերյալ:

Ըստ գրական աղբյուրների՝ 20-րդ դարի 2-րդ կեսին թեյագիոզը տարածված էր եվրոպական շատ երկրներում: Չեխոսլովակիայում սպանդային կենդանիների 27,5% ախտահարված են եղել թեյագիոզով, որոնցից 70,6%-ի մոտ հայտնաբերվել են *Th. rhodesi*, 18,8%-ը՝ *Th. skrjabini* և 10,6%ը՝ *Th. Gulosa* հարուցիչները: Բուլղարիայում տավարի մինչև 60%-ը վարակված էր *Th. rhodesi*-ով: Հեղինակներն

այլ երկրների մասին տեղեկություններ չեն հայտնում [1]: Նախկին ԽՍՀՄ-ի տարածքում թեյագիտող տարածված էր հիմնականում հարավում և Հեռավոր Արևելքում, բայց որոշ տարիներ արձանագրվել է նաև երկրի եվրոպական և ասիական մասի կենտրոնական մասերում: Հյուսիսում թեյագիտող չի արձանագրվել [2, 3, 5]: Ներկայումս թեյագիտող լայնորեն տարածված է ՌԴ-ում:

Ըստ Գ. Ս. Սիվկովի և ուրիշների [6] տվյալների՝ Տյումենի մարզի հարավում ինվազիայի էքստենսիվությունը մատղաշների մոտ հասնում է 36,2%-ի, իսկ հասակավորների մոտ՝ 12,9%-ի: Հիվանդության հարուցիչներն են *Th. gulosa*-ն (89,1%) և *Th. Skrjabini* (10,9%) տեսակները: Օրենբուրգի մարզում խոշոր եղջերավորների թեյագիտող հիվանդությունը արձանագրվել է բոլոր շրջաններում, հարուցիչը եղել է *Th. rhodesi* նեմատոդը:

Հայաստանի Հանրապետությունում թեյագիտող հիվանդության վերաբերյալ գիտական աղբյուրներում և համապատասխան հաշվետվություններում տվյալները բացակայում են:

Թելազիաները կենսահեղիններ են, միջանկյալ տերերն էգ զոոֆիլ ճանճերն են, հիմնական տեսակներն են *Musca autumnalis*, *M. amica* ճանճերը: Գարնանը կենդանիների աչքերում ձմեռած էգ հարուցիչները դնում են առաջին աստիճանի թրթուրներ, որոնց աչքերի արտահոսքի հետ կոչ են տալիս միջանկյալ տերերը՝ զոոֆիլ ճանճերը: Հարուցիչները համեմատաբար փոքր՝ 1-2 սմ երկարության նեմատոդներ են, իրարից տարբերվում են կուտիկուլայի կառուցվածքային առանձնահատկություններով:

Նյութը և մեթոդը

Հետազոտությունները կատարվել են 2020-2023թթ. ՀԱԱՀ անասնաբուժության ու անասնաբուժական սանիտարական փորձաքննության հետազոտական կենտրոնի լաբորատորիայում:

Համաճարակաբանական իրավիճակի գնահատման համար նյութ են հանդիսացել սեփական հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև անասնաբուժական ծառայությունների հաշվետվությունները:

Կենդանիների հետազոտությունները կատարվել են Տավուշի, Լոռու մարզերի մի քանի տնտեսություններում: Թեյագիտող տարածվածության ուսումնասիրման համար կենդանիները ենթարկվել են կլինիկական հետազոտության:

Ընդհանուր առմամբ հետազոտվել են 567 գլուխ տարբեր սեռահասակային խմբի պատկանող կենդանիներ, այդ թվում 141 գլուխ մինչև 1 տարեկան հորթեր, 1-2 տարեկան՝ 186 գլուխ, 2-3 տարեկան՝ 132 գլուխ, 3 տարեկանից բարձր՝ 108 գլուխ կենդանիներ: Խոշոր եղջերավոր կենդանիների մոտ հայտնաբերված թեյագիաները և թրթուրները ֆիքսվել են Բարբազալոյի լուծույթում, այնուհետև տարբերակվել են՝ օգտվելով համընդհանուր կիրառություն ունեցող մեթոդներից /4, 5,6/: Ընդհանուր առմամբ հավաքվել և հետազոտվել է 336 հարուցիչ:

Կենդանիների թեյագիտող վարակվածության տարիքային և տղանակային շարժընթացի ուսումնասիրության նպատակով կատարվել են ամենամսյա կլինիկական հետազոտություններ:

Խոշոր եղջերավորների մոտ մակաբուծող զոոֆիլ ճանճերի տեսակային կազմի ուսումնասիրությունները կատարվել են թեյագիտողի նկատմամբ անբարենպաստ տնտեսություններում: Սեռահասուն ճանճերը հավաքվել են հիմնականում միջատաբանական ցանցով, այնուհետև անշնչացվել են քլորոֆորմով:

Ճանճերի տեսակային կազմը որոշվել է МБС-1 խոշորացույցով և Ա. Ա. Շտակելբերգի, Լ. Ս. Չիմինի [3, 8, 9] որոշիչներով:

Արդյունքներ և քննարկում

Հայտնի է, որ թեյագիտողի տարածման աղբյուր են հանդիսանում վարակված խոշոր եղջերավորները, որոնք արոտավայր են տեղափոխվում առանց նախնական ճիճվաթափման: Տավուշի և Լոռու մարզերում կենդանիներին արոտային պահվածքի են տեղափոխում մարտ ամսին, որը համընկնում է միջանկյալ տեր հանդիսացող զոոֆիլ ճանճերի ակտիվացման հետ: Կենդանիները վարակվում են թեյագիտող՝ արոտավայր տեղափոխվելուց 14-28 օր անց: Դա պայմանավորված է հարուցիչի կենսաբանությամբ, այդ ընթացքում ճանճերի օրգանիզմում ընթանում է հարուցիչների մետամորֆոզը, և նրանք դառնում են ինվազիոն: Հերթական անգամ արցունքի արտահոսքով սնվելու ժամանակ ճանճի կնճիթից թրթուրները ակտիվորեն դուրս են գալիս և անցնում միջանկյալ տիրոջ աչքի ներքին անկյան հատված, որտեղ 21-42 օրվա ընթացքում դառնում են սեռահասուն:

Խոշոր եղջերավոր կենդանիների աչքում թեյագիտաների կյանքի տևողությունը մինչև 1 տարի է: Հիվանդության կլինիկական նշանները ի հայտ են գալիս արդեն ապրիլ ամսին: Հիվանդության առաջին նշաններն են առատ արցունքահոսությունը, լուսավախությունը, 2-3 օր անց կոնյուկտիվիտի նշանները սաստկանում են, զարգանում է կատարային բորբոքում: Աչքերի կոպերը այտուցվում են, և եզրերը արտազատված էքսուդատով սոսնձվում են իրար հետ: Հիվանդության ժամանակ աչքի հյուսվածքները ենթարկվում են տարբեր տեսակի փոփոխությունների՝ սկսած կոնյուկտիվիտից մինչև աչքի ծիածանաթաղանթի պատռվելն ու տեսողության կորուստը: Նույնիսկ ժամանակին բուժելու դեպքում խոցերի առաջացման տեղերում երևում են եղջերաթաղանթի տեսանելի փոփոխությունները:

Հիվանդ կենդանիների քանակը հետզհետե ավելանում է և իր գագաթնակետին է հասնում մայիսի վերջերից մինչև սեպտեմբեր ամիսը: Մատղաշների մոտ էքստենսիվությունը հասնում է 58,4%-ի, իսկ հասակավորների մոտ՝ մինչև 13,1%: Այնուհետև սկսվում է հիվանդ կենդանիների քանակի նվազում, աշնանը հասնում է 5,3%-ի, իսկ ձմռանը՝ 0,2%: Գարնանը սկսվում է հիվանդ կենդանիների քանակի աճ՝ հասնելով մինչև 4.21%-ի, որը կապված է կենդանիներին արոտավայր տեղափոխելու և միջանկյալ տերերի՝ զոոֆիլ ճանճերի քանակի ավելացման հետ: Հետազոտությունների ընթացքում ախտահարված կենդանիների մոտ հայտնաբերվել են 2 տեսակի հարուցիչներ՝ *Thelazia rhodesi* և *Th. gulosa*: 108 ախտահարված կենդանիներից առանձնացվել են 336 հարուցիչներ, որոնց 81,8% /275 հարուցիչ/ պատկանում էին *Th. rhodesi* տեսակին, իսկ 18,2% /61 հարուցիչ/ *Th.gulosa* տեսակին: Թեյագիտողի առաջին կլինիկական նշանները կենդանիների մոտ արձանագրվում են արոտավայր տեղափոխելուց 1-1,5 ամիս անց: Նույնիսկ ժամանակին բուժելու դեպքում խոցերի առաջացման տեղերում երևում են եղջերաթաղանթի տեսանելի փոփոխությունները:

Պարզվել է, որ թեյագիտողը ախտահարվում են բոլոր հասակի խոշոր եղջերավորները, բայց առավել շատ՝ երիտասարդները: Հետազոտված 567 գլուխ կենդանիներից վարակված էին 108-ը, որոնցից մինչև 1 տարեկան հորթերի վարակվածությունը կազմում է 47,5% /67 կենդանի/, 1-2 տարեկան մատղաշների մոտ՝ 15,2% /28 կենդանի/, 2-3 տարեկան մատղաշների մոտ՝ 7.6% /10 կենդանի/ և 3 տարեկանից բարձր հասակավորների մոտ՝ 2,8% /3 կենդանի/:

Հիվանդության արտահայտման գործում մեծ նշանակություն ունի 1 կամ 2 աչքերի ախտահարումը: Թեյագիտողը հիվանդ 108 կենդանիներից 18-ի /16.7%/ մոտ ախտահարվել են 2 աչքերը: Հիվանդությունը շատ ծանր է ընթանում երիտասարդ կենդանիների մոտ: Թեյագիտողը առավել չարորակ ընթացք է ունենում մինչև 1 տարեկան հորթերի մոտ, նրանցից 15-ի /22,4%/ մոտ ախտահարվում են 2 աչքերը: Հասակի հետ այդ ցուցանիշները նվազում են. 1-2 տարեկանների մոտ աչքերի երկկողմանի ախտահարվածությունն նկատվում է 3 կենդանու մոտ /10,7%/, 2-3 տարեկանների դեպքում՝ ընդամենը 1 կենդանու մոտ /10%/: Հասակավոր

Կենդանիների մոտ աչքերի երկկողմանի ախտահարվածություն չի հայտնաբերվել: Դա հավանաբար կապված է հասակային անընկալունակության և հասակավորների հետ հաճախակի անցկացվող հակաճիճվային միջոցառումներով:

Եզրակացություն

Տավուշի և Լոռու մարզերի գյուղացիական տնտեսություններում խոշոր եղջերավոր կենդանիների թեյազիոզը տարածված հիվանդություն է: Հետազոտված 567 կենդանիներից 108-ի մոտ հայտնաբերվել են *Thelazia rhodesi* և *Th.gulosa* տեսակի հարուցիչներ: Հիվանդության նկատմամբ առավել ընկալունակ են մինչև 1 տարեկան մատղաշները, իսկ ամենաքիչը վարակվում են հասակավոր կենդանիները: Որպես օրինաչափություն առավել հաճախ ախտահարվում է կենդանիների 1 աչքը: Վարակված 108 կենդանիներից 18-ի մոտ /16,7%/ ախտահարվել են 2 աչքերը:

Օգտագործված գրականության ցանկ

- 1 Глазунова Л. А., Эпизоотическая ситуация по гельминтозам крупного рогатого скота на юге Тюменской области / Л. А. Глазунова, С. В. Деркач, А. Н. Сибен, А. А. Шварц, О. Н. Полякова // Труды Всероссийского научноисследовательского института ветеринарной энтомологии и арахнологии, Сборник научных трудов, Тюмень, 2006, с. 39-45.
2. Городович Н. М., К вопросу прижизненной диагностики телязиоза крупного рогатого скота / Н. М. Городович // VIII конф. Молодых ученых Дальнего Востока, 1965, с. 153-154.
3. Зимин Л. С., Семейство Muscidae. Настоящие мухи. Фауна СССР. Насекомые / Л. С. Зимин, Москва, Изд-во АН СССР, 1951, т. 18, Вып. 4, 285 с.
4. Зубаирова М. М., Карсаков Н. Т., Заражённость крупного рогатого скота телязиями в разрезе вертикальной поясности Дагестана / М. М. Зубаирова, Н. Т. Карсаков // Российский паразитологический журнал, 2008, № 3, с. 53-55
5. Ивашкин В. М., Мухамадиев С. А., Определитель гельминтов крупного рогатого скота / В. М. Ивашкин, С. А. Мухамадиев // Наука, 1981, с. 196-201.
- 6.Капустин В. Ф., Атлас наиболее распространённых гельминтов сельскохозяйственных животных / В. Ф. Капустин, Москва, Государственное издательство сельскохозяйственной литературы, 1953, 135 с.
7. Сивков Г. С., Домацкий В. Н., Глазунова Л. А., Видовой состав возбудителей и распространение телязиозов крупного рогатого скота на юге Тюменской области / Г. С. Сивков, В. Н. Домацкий, Л. А. Глазунова // Проблемы энтомологии и арахнологии: сб. науч. трудов ВНИИВЭА, 2005, Вып. 47, с. 114-118.
8. Штакельберг А. А., Определитель мух Европейской части СССР / А. А. Штакельберг, Москва, Изд-во АН СССР, 1933, 482 с.
- 9.Штакельберг А. А., Синантропные двукрылые фауны СССР / А. А. Штакельберг, Москва, Изд-во АН СССР, 1956, 163 с.

THELAZIASIS OF CATTLE IN THE REPUBLIC OF ARMENIA

GRIGORYAN VALERI

Senior Researcher of the Scientific Center for Veterinary Medicine and

Veterinary Sanitary Expertise

PhD in Biological Sciences, Associate Professor

ANAU lecturer

e-mail: grigoryanvgv@mail.ru

HAKOBYAN ANUSH

PhD in Veterinary Sciences, Associate Professor

Leading Researcher of the Scientific Center for Veterinary Medicine and

Veterinary Sanitary Expertise

ANAU lecturer

e-mail: akobian.anush@gmail.com

PETROSYAN GAYANE

PhD in Biological Sciences, Associate Professor

Researcher of the Scientific Center for Veterinary Medicine and

Veterinary Sanitary Expertise

ANAU lecturer

e-mail: gayanemartinovna@gmail.com

YERIBEKYAN SPARTAK

Responsible for the Sampling Department

of the NCDC Reference Laboratory

e-mail: vivarium2016@mail.ru

GRIGORYAN LIANA

PhD in Veterinary Sciences, Associate Professor

Director of the Veterinary Medicine and Veterinary

Sanitary Examination Research Center

e-mail: lianagrigroryan7878@mail.ru

Cattle breeding is considered one of the leading branches of agriculture and serves as a primary source of human food (meat, milk), plays a crucial role in supplying plant nutrition, in processing raw materials for light industry.

Cattle Thelaziasis is one of the widespread but little studied diseases in Armenia. In a number of small farms of Tavush and Lori marzes, 567 animals belonging to different age groups were examined in all seasons of the year. 108 of the examined animals /19.3%/ were found to have Thelazia pathogens, which were of 2 species: Thelazia rhodesi and Thelazia gulosa. Cubs up to 1 year old are most susceptible to the

disease, and animals older than 3 years are rarely infected. As a rule, in infected animals, mainly 1 eye is affected, only 18 /16.7%/ have 2 eyes affected.

The number of sick animals gradually increases and reaches its peak from late May to September. Extensivity in young animals reaches 58.4%, while in adults - up to 13.1%. Then the number of sick animals decreases, reaching 5.3% in autumn and 0.2% in winter. In spring, the number of sick animals increases, reaching up to 4.21%, which is associated with the transfer of animals to pasture and an increase in the number of intermediate hosts, such as zoophilic flies.

Keywords: *Thelaziasis, animals, Tavush, Lori, eye, pathogen.*

ТЕЛЯЗИОЗ КРУПНОГО РОГАТОГО СКОТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ГРИГОРЯН ВАЛЕРИЙ

Старший научный сотрудник Научного центра ветеринарной и

ветеринарно-санитарной экспертизы

Кандидат биологических наук, доцент

Преподаватель АНАУ

электронная почта: grigoryanvgv@mail.ru

АКОПЯН АНУШ

Ведущий научный сотрудник Научного центра ветеринарной

и ветеринарно-санитарной экспертизы

Кандидат ветеринарных наук, доцент

Преподаватель АНАУ

электронная почта: akobian.anush@gmail.com

ПЕТРОСЯН ГАЯНЕ

Научный сотрудник Научного центра ветеринарной и

ветеринарно-санитарной экспертизы

Кандидат биологических наук, доцент

Преподаватель АНАУ

электронная почта: gayanemartinovna@gmail.com

ЕРИБЕКЯН СПАРТАК

Ответственный за пробоотборный отдел

референс-лаборатории АО

электронная почта: vivarium2016@mail.ru

ГРИГОРЯН ЛИАНА

Кандидат ветеринарных наук, доцент

Директор Научно-исследовательского центра ветеринарной и

ветеринарно-санитарной экспертизы

электронная почта: lianagrigoryan7878@mail.ru

Скотоводство считается одной из ведущих отраслей сельского хозяйства и является основным источником пищи человека (мясо, молоко), переработки, сырья для легкой промышленности, основным поставщиком питания растений.

Телязиоз крупного рогатого скота является одним из широко распространённых, но малоизученных заболеваний в Армении. В ряде мелких хозяйств Тавушской и Лорийской областей во все сезоны года обследовано 567 животных, принадлежащих к разным возрастным группам. У 108 обследованных животных /19,3%/ выявлены возбудители *Thelazia* 2-х видов: *Thelazia rhodesi* и *Thelazia gulosa*. Наиболее подвержены заболеванию детеныши до 1 года, редко заражаются животные старше 3 лет. Как правило, у инфицированных животных поражается преимущественно 1 глаз, только у 18 (16,7%) поражаются 2 глаза.

Число больных животных постепенно увеличивается и достигает пика с конца мая по сентябрь. Экстенсивность у молодняка достигает 58,4%, а у взрослых - до 13,1%. Затем количество больных животных начинает снижаться, достигая 5,3% осенью и 0,2% зимой. Весной начинается увеличение числа больных животных, достигающее до 4,21%, что связано с переводом животных на пастбище и увеличением числа промежуточных хозяев - зоофильных мух.

Ключевые слова: телязиоз, животные, Тавуш, Лори, глаз, возбудитель.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 05.05.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 14.05.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: